ԵՐԵՎԱՆԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
## «ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 655930
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 655930
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 655930
Эл.почта: norkmarashmc@gmail.com

«16» ապրիլի 2026թ.

# ՀՐԱՄԱՆ N ԳՆ-457-Ա
# ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ Ա/Հ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների Մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիր ատուի անվանում | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի համարը | չափաբաժնի անվանումը | Գնման գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՆՄԲԿ-ԷԱՃԱՊ ՁԲ-26/65 | 38 | Օդի մանրէազերծման սարքավորում | 1020000 | Նալբանդյան Տիգրան Արծրունի Ա/Հ | 67094216 | ՀՀ, Լոռու մարզ, Կուրթան, 12փ. 10տուն, | 06.04.2026թ. | «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ | 1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15 կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները) | * Ներկայացվում է ստորև |

*բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.03.2026 թվականին հայտարարել է ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/65 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 4 որոշմամբ Նալբանդյան Տիգրան Արծրունի Ա/Հ (այսուհետ նաև՝ Մասնակից) հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

Նալբանդյան Տիգրան Արծրունի Ա/Հ հայտով ներկայացված հավելվածում 1-ում ընկերության անունը չի համապատասխանում իրավաբանական անձանց ռեգիստրի տվյալներին,

38-րդ չափաբաժնում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է առաջարկված ապրանքի ապրանքային նշանը և/կամ/ մոդելը և/կամ/ արտադրողը և/կամ/ֆիրմային անվանումը:

Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և համապատասխան Մասնակցին/Մասնակիցներին արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար տալ օրենսդրությամբ սահմանված 1 /մեկ/ աշխատանքային օր ժամկետը, 02.04.2026թ. ներառյալ: Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 03.04.2026թ. ժամը 11:45-ին, ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեում:

Մասնակցին 01.04.2026թ.-ին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով սահմանված կարգով ծանուցվել է անհամապատասխանությունների շտկման անհրաժեշտության մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 5 որոշմամբ արձանագրվել է, որ Նալբանդյան Տիգրան Արծրունի Ա/Ձ կողմից կատարված շտկումը լիարժեք չէ: Կատարված շտկման արդյունքում Մասնակիցը չի ներկայացրել շտկված հավելված 1-ը, ուստի Մասնակցի հայտը ենթակա է մերժման: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 6 որոշմամբ Մասնակցի հայտը մերժվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 8 որոշմամբ 38-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Նշված չափաբաժնով Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 06.04.2026 թվականին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը վճարել է հայտի ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կողմից հայտի ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընթացակարգով հայտի ապահովում նախատեսված չէ և 16.04.2026 թվականի դրությամբ Մասնակիցը հայտի ապահովում չի վճարել Պատվիրատուին:

ՏՆՕՐԵՆ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ